ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի _____ -ի N - Ն

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 25-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին և 10.1. կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմերի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք բերված գույքերը նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ, Տավուշի մարզի Իջևան և Դիլիջան համայնքներին՝ համաձայն N1 և N2 հավելվածների:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից սույն որոշման հավելվածների ցանկում նշված համայնքների ղեկավարների հետ կնքել նվիրաբերության պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով դրույթ, որ պայմանագրերի կնքման և հաշվառման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման համայնքների միջոցների հաշվին:

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված պայմանագրերը կնքելուց հետո եռամսյա ժամկետում համապատասխան համայնքների հետ համատեղ ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

2024 թ. _____ «___»

Երևան

Հավելված N1

ՀՀ կառավարության 2024 թվականի

----------ի ----ի N -Ա որոշման

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ԵՎ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հ/Հ	**Մարզ**	**Համայնք**	**Թողարկման տարեթիվը**	**Մակնիշը, տիպարը**	**Տեսակը, թափքի տեսակը**	**Նույնա համա**
	2.	3.	4.			
1	Արմավիր	Վաղարշապատ	2023	KAMAZ KO-427-72 (KAMAZ-53605)	Բեռնատար, աղբատար	X5H42
2			2023	KAMAZ KO-427-72 (KAMAZ-53605)	Բեռնատար, աղբատար	X5H42
3			2023	KAMAZ KO-427-72 (KAMAZ-53605)	Բեռնատար, աղբատար	X5H42
4			2023	KAMAZ KO-427-72 (KAMAZ-53605)	Բեռնատար, աղբատար	X5H42
5			2023	KAMAZ KO-427-(KA MAZ-53605)	Բեռնատար, աղբատար	X5H42
6			2023	KAMAZ KO-427-(KA MAZ-53605)	Բեռնատար, աղբատար	X5H42
7			2023	KAMAZ KO-427- (KAMAZ-53605)	Բեռնատար, աղբատար	X5H42
8			2023	KAMAZ 65115	Բեռնատար, ինքնաթափ	XTC65
9	Տավուշ	Իջևան	2023	UKM 1500	Հատուկ, փոշեկուլ	UKM15

10		2023	KAMAZ CM18 (KAMAZ 65115)	Հատուկ, աղբատար	XKK50
11	Դիլիջան	2023	UKM 1500	Հատուկ, փոշեկուլ	UKM15
12		2023	KAMAZ CM18 (KAMAZ 65115)	Հատուկ, աղբատար	XKK50

Հավելված N2

ՀՀ կառավարության 2024 թվականի

----------ի ----ի N -Ա որոշման

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԵՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ԵՎ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔ

(ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՏԵՍԱԿ՝ ԱՂԲԱՐԿՂ ՊԼԱՍՏՄԱՍՍԱՅԵ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԱՂԲԻ ՏԱՐԱՆԵՐ ԵՎ ԱՂԲԱՄԱՆՆԵՐ)

Հ/Հ	**Մարզ**	**Համայնք**	**Ապրանքային տեսակը**	**Տեխնիկական ցուցանիշներ**	**Ապրանքա տեսակի քանակը**
	2.	3.			
1	Արմավիր	Վաղարշապատ	Աղբարկղ,	1100 լիտր	1200

2	Տավուշ	Իջևան	պլաստմասսայե Թափոնների և աղբի տարաներ և աղբամաններ	1100 լիտր	110
		Դիլիջան	Թափոնների և աղբի տարաներ և աղբամաններ		110